Ալեքսանդր Ծատուրյան

Որբեր

Մի՛ լար, քո՛ւյր իմ, դառն արցունքով
Եղբորդ սիրտը մի՛ այրիլ,
Մեր խղճուկ մոր դու լաց սուգով
Նորից կյանք չես պարգևիլ:

Անգութ մահը նորան անդարձ
Խլեց մեզնից հավիտյան,
Եվ մեզ սիրող մորից զրկված՝
Թողեց անտեր, անպաշտպան:

Բայց դու մի՛ լար… Քո՛ւյր իմ անգին,
Հիշի՛ր մեր մոր այն խրրատ՝
Որ նա մահվան տխուր ժամին
Մեզ կըտակեց, իբր ավանդ:

«Սիրե՛ք միմյանց, նա մեզ ասաց
Անվերջ սիրով, ի՛մ որդիք,
Սիրե՛ք անկեղծ ու անձնուրաց,
Որ միշտ լինեք երջանիկ»:

Մի լար. քո՛ւյր իմ… այսուհետև
Թո՛ղ այդ սերը կյանքի մեջ
Լինի մեզ մայր, թիկունք ու թև.

Նա մեր ցավին կըտա վերջ…

1888, 4 օգոստոսի